ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԼԽԱՎՈՐ ԴԱՏԱԽԱԶ

ՀՐԱՄԱՆ № 9

«10» 02 2020 թ. գ. Երևան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԼԽԱՎՈՐ ԴԱՏԱԽԱԶԻ 2017 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 28-Ի N 111 ՀՐԱՄԱՆՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հայաստանի Հանրապետության դատախազության աշխատանքների տարեկան ամփոփման ընթացակարգը պարզեցնելու և այս ոլորտում աշխատանքի արդյունավետությունը բարձրացնելու, Հայաստանի Հանրապետության գլխավոր դատախազության և Հայաստանի Հանրապետության զինվորական կենտրոնական դատախազության կառուցվածքային ստորաբաժանումների ու ավագ դատախազների, դատախազությունների կողմից կազմվող և ներկայացվող տարեկան աշխատանքների մասին զեկուցագրի օրինակելի ձևը հստակեցնելու նպատակով, ղեկավարվելով «Դատախազության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 2-րդ հոդվածի 2-րդ մասով, 9-րդ հոդվածի 2-րդ մասի 7-րդ կետով, 30-րդ հոդվածի 3-րդ մասով՝

ՀՐԱՄԱՅՈՒՄ ԵՄ

1. Հայաստանի Հանրապետության գլխավոր դատախազի 2017 թվականի դեկտեմբերի 28-ի «Հայաստանի Հանրապետության դատախազության համակարգում տարեկան աշխատանքների արդյունքների ամփոփման կարգը սահմանելու, տարեկան աշխատանքների մասին զեկուցագրերի օրինակելի ձևը հաստատելու և «Հայաստանի Հանրապետության դատախազության համակարգում դատախազների տարեկան աշխատանքների արդյունքների ամփոփման սահմաններն ընդգծելու և տարեկան աշխատանքների մասին զեկուցագրի օրինակելի ձևը հաստատելու մասին» Հայաստանի Հանրապետության գլխավոր դատախազի 2013 թվականի դեկտեմբերի 27-ի թիվ 121 հրամանն ուժը կորցրած ճանաչելու մասին» N 111 հրամանով հաստատված հավելվածի 2-րդ կետի 1-ին ենթակետի «զ» և «է» պարբերություններից «(կատարել համեմատական ուսումնասիրություն 1-ին և 2-րդ կիսամյակի միջև)» բառերը հանել:

2. Սույն հրամանն ուժի մեջ է մտնում հրապարակմանը հաջորդող օրվանից:

3. Սույն հրամանի կատարման վերահսկողությունն իրականացնում է Հայաստանի Հանրապետության գլխավոր դատախազը:

4. Սույն հրամանի պատճենն ուղարկել Հայաստանի Հանրապետության գլխավոր դատախազի տեղակալներին, Հայաստանի Հանրապետության գլխավոր դատախազության վարչությունների պետերին և ավագ դատախազներին, Հայաստանի Հանրապետության զինվորական կենտրոնական դատախազության բաժինների պետերին ու ավագ դատախազներին, մարզերի, Երևան քաղաքի, Երևան քաղաքի վարչական շրջանների և կայազորների զինվորական դատախազներին, Հայաստանի Հանրապետության գլխավոր դատախազի խորհրդականներին ու օգնականներին, Հայաստանի Հանրապետության դատախազության գլխավոր քարտուղարին:

Ա.ԴԱՎԹՅԱՆ